ւեսցուք և ճանապարհ զարքունի գնասցուք:

Այլ և բաւական է բարգաւաճանք վայրին, բնակ լինել հոգևոր հաւուն և անշիջանելի լուսոյն․ քանզի զկնի ձեռնադրելոյն՝ նախ ի սմա գայր, և յետ դառնալոյն ի Հռովմայ[1] և սկիզբն առնէր գործոյն Տեառն․ քակէր զկուռս՝ և քանդէր զմեհեանս, և փոխանակ նոցա շինէր եկեղեցիս և շուրջանակի վանորայս․ և ծածկէր ի նոսա զգանձս աստուածայինս․ և սեփական բնակութիւն ինքեան և զարմից իւրոց ստանայր յաւերժակայ: Յաղագս որոյ հայցէր ի Տեառնէ․ ոչ մտանել ի նմա դանդաչմունս այլանդակս, և աղանդս աւտարոտիս:

Եւ զի անուանի էր գեղ ծննդեան երանելոյս, վասն այնորիկ ի սմանէ առնոյր սուրբն Յուսիկ ամուսին որդոց իւրոց:[2] Եւ թէ գուցէ ասասցէ ոք փոքրկութիւն գոլ՝ ոչ լինել ի քաղաքէ այլ յաւանէ․ զբազումս ի գերագունիցն ունի համաքատակ իւր ի գեղջէ գոլով:

---

ի կրտսերագունից որդւոցն նորա (Բախտուրեայ) Տարբան անուն․․ մեկնեալ ի հօրէն, բնակէ անդրէն ի նոյն գետեզերքն, յորոյ անուն եւ զգաւառն անուանէ Տարօն, եւ զանուն տեղւոյն ուր բնակեցան՝ կոչէ Տրօնս»:

1․ Ագաթ․ էջ 469 գլ․ ճԺԴ (Հրատ Թիֆլիս․ 1885):

2․ Փաւստ․ (Գ․ դպր․ գլ․ ԺԵ) Յուսիկի որդոց ամուսնութեան մասին ասում է․ «Եւ առին եւս իւրեանց կանայս